ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի
տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РФ
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

« 04 » հուլիսի 2025 թ

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ի. գ. թ., ավագ դասախոս Հովհաննիսյան Ն. Ա.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Հողային իրավունք

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն» (հեռակա)

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

Հողը հանդիսանում է ժողովրդի կենսագործունեության կարևորագույն պայմանը, ուստի «Հողային իրավունք» առարկան ուսուցանելը հատկապես անհրաժեշտ է՝ ելնելով հողի կարևոր բնապահպանական, տնտեսական ու սոցիալական նշանակությունից:

Դասընթացը նվիրված է ուսանողների կողմից հողային իրավահարաբերությունների կարգավորման վերաբերյալ համակարգային գիտելիքների ձեռքբերմանը: Դասընթացը պարունակում է հիմնական տեղեկատվություն հողային իրավահարաբերությունների, տարբեր կատեգորիաների հողերի իրավական ռեժիմի, հողամասի նկատմամբ գույքային իրավունքների, պետության կողմից հողի կառավարման, հողերի իրավական պաշտպանության, ինչպես նաև հողային օրենսդրության պահանջների խախտման համար պատասխանատվության վերաբերյալ:

«Հողային իրավունք» առարկան փոխկապակցված է «Քաղաքացիական իրավունք», «Էկոլոգիական իրավունք», «Վարչական իրավունք» և այլ առարկաների հետ: «Հողային իրավունք» առարկան յուրացնելու համար անհրաժեշտ է ունենալ գիտելիքներ պետության և իրավունքի տեսության, քաղաքացիական և էկոլոգիական իրավունքի վերաբերյալ:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացը **նպատակն է** ուսանողների կողմից հողային իրավահարաբերությունների վերաբերյալ համակարգային գիտելիքների ձեռքբերումը:

Դասընթացի **խնդիրներն են** ձևավորել ամբողջական պատկերացում հողային իրավահարաբերությունների, տարբեր կատեգորիաների հողերի իրավական ռեժիմի, հողամասի նկատմամբ գույքային իրավունքների, պետության կողմից հողի կառավարման, հողերի իրավական պաշտպանության, ինչպես նաև հողային օրենսդրության պահանջների խախտման համար պատասխանատվության վերաբերյալ:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի **օբյեկտը** հողային իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերն են: Դասընթացի **առարկան** տարբեր կատեգորիաների հողերի իրավական ռեժիմի, հողամասի նկատմամբ գույքային իրավունքների, պետության կողմից հողի կառավարման, հողերի իրավական պաշտպանության, ինչպես նաև հողային օրենսդրության պահանջների խախտման համար պատասխանատվության վերաբերյալ հիմնահարցերն են:

Դասընթացի մուտքային պահանջները

Սկսելով դասընթացը, ուսանողները պետք է ունենան գիտելիքներ և հմտություններ իրավունքի և պետության տեսության, քաղաքացիական, վարչական, էկոլոգիական իրավունքների ոլորտում:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

***Գիտելիքները*՝**

1. Հողային իրավունքի սկզբունքների, ինստիտուտների, նորմերի ծագումնաբանության և էության, այդ ինստիտուտների և նորմերի օրենսդրական ամրագրման և կիրառման գործընթացի վերաբերյալ հիմնարար և համակարգված գիտելիք: Մասնավորապես,
   - հողային իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդը, հողային իրավունքի համակարգը և հիմնական սկզբունքները, հողային իրավունքի տեղն իրավունքի համակարգում և հարաբերակցությունն իրավունքի մյուս ճյուղերի հետ,
   - հողերի իրավական ռեժիմի հասկացությունն ու բովանդակությունը,

- հողամասի նկատմամբ գույքային իրավունքները,
- հողերի մոնիթորինգը և հողային կադաստրի վարումը,
- հողաշինարարությունը և հողերի պահպանությունը,
- հողային և շրջակա միջավայրի օրենսդրության պահանջների խախտումների համար իրավաբանական պատասխանատվության հասկացությունը և տեսակները:

2. Իրավունքի ընկալման հիմնական հայեցակարգերի, իրավաստեղծման, իրավաբանական տեխնիկայի և տեսությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք:
3. Իրավակիրառման (մասնավորապես՝ իրավաբանական փաստերի վերլուծության, իրավաբանական որակման, իրավական նորմերի և պայմանագրերի մեկնաբանման), իրավական կոլիզիաները լուծելու կանոնների և տեսությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք:

Հմտությունները՝

- ***գիտելիքի կիրառման հմտությունները՝***

1. Կարող է ինքնուրույն հետազոտել և վերլուծել հողային հարաբերությունները կարգավորող օրենսդրական նորմերը:
2. Կարող է աշխատել հողային իրավահարաբերությունների վերաբերյալ նորմատիվ ակտերի, ինչպես նաև դատական պրակտիկայի նյութերի հետ:
3. Կարող է ուղիներ գտնել գործնական խնդիրների վերլուծության և լուծման համար:

- ***ընդհանրական իմացական հմտությունները՝***

1. Կարող է կոնկրետ իրավիճակում կիրառել հողային իրավունքից տեսական գիտելիքները, օրենսդրությունը և դատական պրակտիկան:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- ***ինքնուրույնությունը և պատասխանատվությունը***

1. Ունակ է գնահատել հողային իրավունքի արդի վիճակը և առկա խնդիրները:

Դասավանդման եղանակները և մեթոդները

– դասախոսություն՝ լուսապատկերների ուղեկցությամբ,

– գործնական աշխատանքներ՝ ուսուցման տարբեր միջոցների ու մեթոդների կիրառմամբ:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ **2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ)** աշխատատարությամբ, որից **20 ակադեմիական ժամ** նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել **3-րդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում**:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**72**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**20**
1.1.1. Դասախոսություններ	**8**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**12**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**48**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	**20**
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	**28**
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	**18**

1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	**10**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**ստուգարք**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Դասընթացի բաժինները և թեմաները	Ընդհանուր (ակ. ժամ)	Դասախոսություններ (ակ. ժամ)	Գործնական. (ակ. ժամ)
Թեմա 1. «Հողային իրավունքի հասկացությունը» Հողային իրավունքի սկզբունքները»	4	2	2
Թեմա 2. «Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը»«Հողամասի նկատմամբ սեփականատերեր չհամարվող անձանց գույքային իրավունքները»	4	2	2
Թեմա 3 «Հողամասի նկատմամբ իրավունքների ծագման հիմքերը» «Հողամասի նկատմամբ իրավունքների դադարման հիմքերը»	5	2	3
Թեմա 4 «Հողերի իրավական ռեժիմները» «Հողերի պահպանությունը»	4	1	3
Թեմա 5 «Պատասխանատվությունը հողային օրենսդրության պահանջների խախտման համար»	3	1	2

Ընդամենը	**20**	**8**	**12**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. «Հողային իրավունքի հասկացությունը»

1.1 Հողային իրավունքը որպես իրավունքի ճյուղ, գիտություն և ուսումնական դասընթաց

1.2 Հողային իրավունքի առարկան

1.3. Հողային իրավահարաբերությունների կարգավորման մեթոդը

1.4. Հողային իրավունքի աղբյուրները

1.5.Հողային իրավունքի համակարգը

1.6. Հողային իրավունքի տեղն իրավունքի համակարգում և հարաբերակցությունն այլ իրավունքի ճյուղերի հետ

Թեմա 2. «Հողային իրավունքի սկզբունքները»

2.1. Հողային իրավունքի սկզբունքների հասկացությունը և համակարգը

2.2. Հողի՝ որպես բնական և անշարժ գույքի օբյեկտի, արտադրության հիմնական միջոցի, ինչպես նաև տարածքային բազիսի օգտագործման համատեղման սկզբունքը

2.3. Հողերի սեփականության և օգտագործման սուբյեկտների բազմազանության սկզբունքը

2.4. Հողային հարաբերություններում սեփականության սուբյեկտների իրավահավասարության սկզբունքը

2.5. Քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից հողի տնօրինման ու օգտագործման գործունեությանը՝ օրենքին հակասող պետական միջամտության անթույլատրելիության սկզբունքը

Թեմա 3. «Հողային իրավահարաբերությունները»

3.1. Հողային իրավահարաբերությունների հասկացությունը և բովանդակությունը

3.2. Հողային իրավահարաբերությունների սուբյեկտները

3.3. Հողամասը որպես հողային իրավահարաբերությունների օբյեկտ

3.4. Հողային իրավահարաբերությունների տեսակները և ծագման հիմքերը

Թեմա 4. «Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը»

4.1. Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի հասկացությունը

4.2. Հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը

4.3. Հողի նկատմամբ պետության և համայնքների սեփականությունը

4.4. Հողամասերի ընդհանուր սեփականության իրավունքը

Թեմա 5. «Հողամասի նկատմամբ սեփականատերեր չհամարվող անձանց գույքային իրավունքները»

5.1. Հողամասի նկատմամբ սահմանափակ գույքային իրավունքների հասկացությունը

5.2. Հողամասի կառուցապատման իրավունքը

5.3. Հողամասի օգտագործման և վարձակալության իրավունքը

5.4. Հողամասի սերվիտուտը

Թեմա 6. «Հողամասի նկատմամբ իրավունքների ծագման հիմքերը»

6.1. Գործարքները որպես հողամասի նկատմամբ իրավունքների ծագման հիմք

6.2. Վարչական ակտը որպես հողամասի նկատմամբ իրավունքների ծագման հիմք

6.3. Հողամասի նկատմամբ իրավունքների ծագումը դատական ակտի հիման վրա

6.4. Հողամասի նկատմամբ իրավունքների ծագումը ձեռքբերման վաղեմության ուժով

6.5. Հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը և իրավահաստատող փաստաթղթերը

Թեմա 7. «Հողամասի նկատմամբ իրավունքների դադարման հիմքերը»

7.1.Հողամասից կամովին հրաժարվելը և օտարելը

7.2. Հողամասը հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարելը

7.3. Հողամասի ռեկվիզիցիան կամ բռնագրավումը

7.4. Օրենսդրության խախտմամբ օգտագործվող հողամասը հարկադիր վերցնելը

7.5. Հողամասի վրա դրա սեփականատիրոջ պարտավորություններով բռնագանձում տարածելը

Թեմա 8. «Հողերի իրավական ռեժիմները»

8.1. Հողերի նպատակային և գործառնական նշանակությունը

8.2. Գյուղատնտեսական նշանակության հողերի հասկացությունը և կազմը

8.3. Բնակավայրերի հողերի հասկացությունը և կազմը

8.3. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերը

8.4. Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերը

8.5. Հատուկ պահպանվող տարածքների հողերի հասկացությունը և կազմը, հատուկ նշանակության հողերը

Թեմա 9. «Հողային պաշարների պետական կառավարումը»

9.1. Հողային պաշարների հասկացությունը

9.2. Հողերի օգտագործման սխեմաները

9.3. Հողերի բնական գյուղատնտեսական շրջանացումը և նորմավորումը

9.4. Հողաշինարարությունը

Թեմա 10. «Հողերի պահպանությունը»

10.1. Հողերի պահպանության նպատակները և խնդիրները

10.2. Շենքերի, շինությունների նախագծմանն ու շահագործմանն առաջադրվող

քաղաքաշինական, բնապահպանական, սանիտարահիգիենիկ և այլ պահանջները

10.3. Տեխնածին, համաճարակային և այլ վնասակար երևույթների հետևանքով ախտահարման ենթարկված հողերի օգտագործումը

Թեմա 11. «Հողերի մոնիթորինգը և հողային կադաստրի վարումը»

11.1. Հողերի մոնիթորինգի հասկացությունը և խնդիրները

11.2. Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի հասկացությունը

11.3. Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումը և հողի գնահատումը

Թեմա 12. «Պատասխանատվությունը հողային օրենսդրության պահանջների խախտման համար»

12.1. Հողային օրենսդրության պահանջների խախտման համար իրավաբանական պատասխանատվության հասկացությունը և տեսակները

12.2. Վարչական պատասխանատվությունը հողային օրենսդրության պահանջների խախտման համար

12.3. Քրեական պատասխանատվությունը հողային օրենսդրության պահանջների խախտման համար

12.4. Քաղաքացիական պատասխանատվությունը հողային օրենսդրության պահանջների խախտման համար

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

Նորմատիվ իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն
2. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք
3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք
4. Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգիրք
5. Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք

6. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք

7. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք

Գրականության ցանկ

Ерофеев Б. В. Земельное право России: учебник. Гриф МО РФ / Б. В. Ерофеев. - 12-е изд., перераб. и доп. - М. : Юрайт, 2012.

Боголюбов С. А. Земельное право: учебник для бакалавров. Гриф УМО / С. А. Боголюбов. - 5-е изд., перераб. и доп. - М. : Юрайт, 2013.

Васянович А. В. Правовой режим земельного участка: учебное пособие / А. В. Васянович. - Иркутск : РАП, 2009.

Լրացուցիչ գրականություն

Сырых Е. В. Земельное право : учеб. для вузов / Е. В. Сырых. - Изд. 2-е, перераб. и доп. - М.: Юстицинформ, 2005.

Улюкаев В. Земельное право и природоресурсное право. Учебное пособие. - М.: АКАДЕМИЯ ИЦ, 2003.

Чешаев А.С., Фесенко И.П. Земельный кадастр: Учебник для вузов. - М.: ПРИОР, 2004.

Ганова, С. Д. Земельное право: учебно-методический комплекс для гос. служащих г.Москвы, обучающихся по образоват. программам проф. переподготовки / С. Д. Ганова. - М. : МГУУ ПМ, 2008.

Чубуков, Г. В. Земельное право России: Учебник для студентов вузов / Г.В. Чубуков. - М. : Изд-е г-на Тихомирова М.Ю., 2003.